ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Գերմանահայկական Հիմնադրամ» Ծրագրի Կառավարման Գրասենյակ հիմնարկը սիրով հայտարարում է KfW բանկի կողմից ֆինանսավորվող «ՀՀ Գյուղատնտեսության Ոլորտի Աջակցում» վարկային ծրագրի նոր՝ 3-րդ փուլի մեկնարկի մասին:

Ծրագրի նպատակն է գյուղատնտեսության ոլորտում զբաղված փոքր և միջին ձեռնարկությունների, անհատ ձեռներեցների, ինչպես նաև անհատ գյուղացիների համար ապահովել կայուն ֆինանսական միջոցների հասանելիություն, ինչպես նաև ֆինանսական կազմակերպությունների համար ձևավորել գյուղատնտեսական վարկավորման նորագույն տեխնոլոգիաների և փորձի կատարելագործման հասանելիություն: Ծրագիրը նպաստելու է մասնավոր հատվածի խթանմանը Հայաստանի Հանրապետությունում՝ ընդլայնելով և խորացնելով գյուղատնտեսության ֆինանսավորման հնարավորությունները, որն իր հերթին կօգնի ստեղծել նոր աշխատատեղեր և ապահովել եկամուտների ավելացումը:

Վարկերը նախատեսվում են տրամադրել գյուղատնտեսության ոլորտի առաջնային արտադրողներին, մատակարարներին, վերամշակողներին և ծառայություններ մատուցողներին:

Ծրագիրը բաղկացած է երկու բաղադրիչից. առաջին բաղադրիչը նախատեսված է ընդհանուր գյուղատնտեսության ֆինանսավորման համար: Երկրորդ բաղադրիչը՝ գյուղատնտեսության ոլորտի արժեքային շղթաների, օրգանական գյուղատնտեսության մեջ ներդրումների, ինչպես նաև կոոպերատիվների կողմից իրականացվող ներդրումների ֆինանսավորման համար:

Ծրագրի երրորդ փուլը, ինչպես և KfW բանկի կողմից ֆինանսավորվող բոլոր ծրագրերը, ներառում է տեխնիկական աջակցության բաղադրիչ, որի իրագործման համար անցկացված միջազգային բաց մրցույթի արդյունքում Շվեյցարիայում հիմնված «BFC - Business and Finance Consult» ընկերությունն ընտրվել է որպես «Ծրագրի խորհրդատու»: Ծրագրի խորհրդատուն իր գործունեությունը սկսել է 2020 թվականի հոկտեմբերին՝ համապատասխան Խորհրդատվական պայմանագրի ստորագրմամբ:

Տեխնիկական աջակցությունը բաղկացած է երկու բաղադրիչից: Առաջին բաղադրիչը ներառում է գյուղատնտեսության վարկավորման ընդհանուր տեխնոլոգիաների զարգացման գործում ֆինանսական կազմակերպություններին

ցուցաբերվող աջակցություն, ինչպես նաև վերը նշված արժեշղթաների ֆինանսավորման, օրգանական գյուղատնտեսության և գյուղատնտեսական կոոպերատիվների պիլոտային ուղղություններ: Տեխնիկական աջակցության երկրորդ բաղադրիչն ուղղված է ԳՀՀ ԾԿԳ հիմնարկում, ինչպես նաև գործընկեր ֆինանսական կազմակերպություններում բնապահպանական և սոցիալական կառավարման համակարգի ներդրմանն ու զարգացմանը:

Ծրագրի 3-րդ փուլի գործընկեր ֆինանսական կազմակերպություններն են.

- ԱԿԲԱ Բանկ ԲԲԸ
- Արարատբանկ ԲԲԸ
- Արդշինբանկ ՓԲԸ
- Ինեկոբանկ ՓԲԸ
- Կոնվերսբանկ ՓԲԸ
- Հայբիզնեսբանկ ՓԲԸ
- Հայէկոնոմբանկ ԲԲԸ
- Յունիբանկ ԲԲԸ
- Ֆինկա ՈւՎԿ ՓԲԸ
- Կամուրջ ՈւՎԿ ՓԲԸ
- Հայաստանի Զարգացման և Ներդրումների Կորպորացիա ՎԿ ՓԲԸ
- ՖԱՍԹ Կրեդիտ Կապիտալ ՈւՎԿ ՓԲԸ